ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 971-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի N -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 971-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1? Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի «Կոնյակի սպիրտի արտահանման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 971-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշումը 2?1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2?2-րդ կետով?

«2.2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին։»?

2) որոշման հավելվածի՝

ա? 3-րդ և 4-րդ կետերում «և 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը» բառերը փոխարինել «, 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև 2026 թվականի ապրիլի 1-ը և 2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով,

բ? 3-րդ կետի 2-րդ և 12-րդ կետի 5-րդ ենթակետերում «և 2025» բառերը փոխարինել «, 2025 և 2026» բառերով,

գ? 4?1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4?2-րդ, 4?3-րդ, 4?4-րդ և 4?5-րդ կետերով?

«4.2. 2026 թվականի հունիսի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող աջակցության ընդհանուր չափը չպետք է գերազանցի 2026 թվականին մթերված խաղողի, ծրագրի 4?1-ին կետում նշված հաշվարկով ստացվող համարժեք քանակությամբ կոնյակի սպիրտի (100 %-անոց սպիրտի հաշվարկով) և 100 դրամի արտադրյալի կրկնապատիկի չափը։

4?3? 2026 թվականին մթերված խաղողի քանակության համար հիմք է ընդունվում «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա տնտեսավարողի կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն պաշտոնական գրությամբ ներկայացված՝ խաղողի 2026 թվականի բերքի գնման քանակների և միջին գնի մասին տեղեկատվությունը։

4.4. Տնտեսավարող սուբյեկտների մթերման կետերում 2026 թվականի խաղողի բերքի գնման քանակների նկատմամբ մշտադիտարկումն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտի մթերման կետի տեղակայման վայրի Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի աշխատակիցների կողմից։

4?5? Մշտադիտարկում իրականացնելու նպատակով խաղողի մթերումների սկսելու օրվան նախորդող առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտները գրությամբ դիմում են մթերման կետի

տեղակայման վայրի Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմ, իսկ գրության պատճենը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն։»,

դ? 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9?1-ին կետով?

«9.1. Տնտեսավարող սուբյեկտը 2026 թվականին խաղողի մթերումների գործընթացն ավարտելուց և ծրագրի N 3 ձևի եզրակացությունն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում աջակցության տրամադրման նպատակով էլեկտրոնային կամ թղթային տարբերակով ծրագրի N 4 ձևին համապատասխան դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, որին կցում է ծրագրի 4?3-րդ կետում նշված գրության և ծրագրի N 3 ձևի եզրակացության բնօրինակները, N 6 ձևի տեղեկությունը և ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող կոնյակի սպիրտներ արտադրողների կողմից 100 հազար լիտրը (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) իրացվելուց հետո այլ խմբաքանակների իրացման իրավունքի ձեռքբերման նպատակով վճարված պետական տուրքի անդորրագրերի պատճենները։»,

ե? 12-րդ կետի 3-րդ ենթակետում «կետում» բառը փոխարինել «կամ 9?1-ին կետում» բառերով,

զ? 12-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ?

«4) ծրագրի N 4 ձևի դիմումին կցված չեն ծրագրի 9-րդ կամ 9?1-ին կետում նշված բոլոր փաստաթղթերը?»,

է? N 6 ձևի աղյուսակում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող՝

«	2026 թվականին տարեկան փաստացի մթերված խաղողի քանակը	

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ